Արձանագրություն N3

ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպված «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15.» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Երևան 9 նոյեմբերի 2018թ.
Ժամը՝ 10:45

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավագյան, Ս. Սարգսյան, Վ. Քեռյան, Ա. Խուդինյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գրիգորյան

1. *Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության վերաբերյալ*

Հանձնաժողովը որոշեց.

Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվությունը՝ մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և նիստը կասեցնելու վերաբերյալ

Հանձնաժողովն ուսումնասիրելով առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը, ***որոշեց***՝

- «ԳՈՐԾ-555» ՓԲԸ-ի և «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար և վերջիններիս հայտարարել ընտրված մասնակիցներ համապատասխանաբար Ընթացակարգի 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով «Սենդա» ՍՊԸ-ի կողմից հրավերով նախատեսված պահանջվող փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ներկայացվել՝ ուստի վերջինիս հայտը ենթակա է մերժման համաձայն՝ ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) Կարգի 19-րդ կետի 5-րդ ենթակետի:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Սենդա» ՍՊԸ-ի հայտը մերժելու պարագայում էլեկտրոնային աճուրդ համակարգում որպես հաջորդ փուլ նշվել է «Մինչև որակավորման շտկման ամփոփում», ինչից ենթադրվում է, որ համակարգը տվյալ մասնակցին փաստաթղթերը շտկելու, այսինքն փաստաթղթերը կցելու և ուղարկելու հնարավորություն է տալիս, ուստի ստեղծված իրավիճակից ելնելու նպատակով նիստը կասեցնել՝ համապատասխան գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ խնդրելով տալ պարզաբանում, թե տվյալ դեպքում

պե՞տք է առաջնորդվել Կարգի 19-րդ կետի 5-րդ ենթակետով և մերժել մասնակցի հայտը, իսկ եթե անհրաժեշտ է առաջնորդվել էլեկտրոնային աճուրդի համակարգով, ապա հնարավորություն տալ նույն համակարգում վերականգնել «Սենդա» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքը:

Հանձնաժողովը որոշեց՝ նիստը վերսկսել ՀՀ ֆինանսների նախարարությունից գրավոր պարզաբանումը ստանալուց և համակարգում անհրաժեշտ փոփոխություններ կատարելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15.» ծածկագրով ընթացակարգի նիստը 07.12.2018թ. վերսկսելու վերաբերյալ

ՀՀ ֆինանսների նախարարությունը 21.11.2018թ. Պատվիրատուին ուղղված թիվ 01.1/27-1/21283-18 գրությամբ հայտնել է, որ հաշվի առնելով, որ «Սենդա» ՍՊԸ-ի կողմից գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ժամկետում չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ուստի վերջինիս հայտը ենթակա է մերժման:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ էլեկտրոնային աճուրդ համակարգում անհրաժեշտ կարգավորումները տեղի են ունեցել 07.12.2018թ.-ին, ուստի գնահատող հանձնաժողովը նույն օրով հրավիրված նիստով մերժեց «Սենդա» ՍՊԸ-ի հայտը և Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարեց հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից՝ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

4.Փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ

Ղեկավարվելով Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետով՝ համակարգի միջոցով ծանուցել «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

5.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 13.12.2018թ. ժամը 10:45-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. 13.12.2018թ. ժամը 10:45-ին տեղի ունեցած «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/15.» ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման վերաբերյալ

Հանձնաժողովն ուսումնասիրելով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը, որոշեց՝ վերջինիս հայտը գնահատել

բավարար և «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ին ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ևս հայտարարել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Անգործության ժամկետի վերաբերյալ

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Վ. Թորոսյան

անդամներ՝ _____ Ա. Ավագյան

_____ Ս. Սարգսյան

_____ Վ. Քեոյան

_____ Ա. Խուդինյան

Քարտուղար՝ _____ Ա. Գրիգորյան